

31992L0101

Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների ստեղծման և դրանց կապիտալի պահպանման ու դրա չափի փոփոխման մասին 77/91/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդի 1992 թվականի նոյեմբերի 23-ի 92/101/ԵՏՀ հրահանգ

Պաշտոնական տեղեկագիր L 347, 28.11.1992թ., էջեր 0064 – 0066

Ֆիննական հատուկ հրատարակություն. Գլուխ 17, հատոր 1, էջ 0115

Շվեդական հատուկ հրատարակություն. Գլուխ 17, հատոր 1, էջ 0115

Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների ստեղծման և դրանց կապիտալի պահպանման ու դրա չափի փոփոխման մասին թիվ 77/91/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ ԽՈՐՀՐԴԻ 1992 թվականի նոյեմբերի 23-ի 92/101/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 54-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ տեղաբաշխված կապիտալը պահպանելու և բաժնետերերի նկատմամբ հավասար վերաբերմունք ապահովելու համար 77/91/ԵՏՀ (4) հրահանգով սահմանափակվում է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության՝ իր սեփական բաժնետոմսերը ձեռք բերելու իրավունքը,

քանի որ ընկերության կողմից իր սեփական բաժնետոմսերի ձեռքբերման նկատմամբ սահմանափակումները կիրառվում են ոչ միայն ընկերության կողմից, այլ նաև իր անունից, սակայն ի շահ՝ ընկերության գործող անձի կողմից կատարվող ձեռքբերումների նկատմամբ,

քանի որ, արգելելու համար սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությանը օգտագործել մեկ այլ ընկերություն, որտեղ ձայնի իրավունքների մեծամասնությունը պատկանում է իրեն կամ որի նկատմամբ այն գերակա ազդեցության հնարավորություն ունի՝ նման ձեռքբերումներ կատարելու համար, առանց պահպանելու այդ կապակցությամբ նախատեսված սահմանափակումները, ընկերության կողմից իր սեփական բաժնետոմսերի ձեռքբերումը կարգավորող միջոցները պետք է տարածվեն նման այլ ընկերությունների կողմից բաժնետոմսերի ձեռքբերման ամենակարևոր և ամենահաճախ հանդիպող դեպքերի վրա. քանի որ այդ միջոցները պետք է տարածվեն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության բաժնետոմսերի բաժանորդագրման վրա,

քանի որ 77/91/ԵՏՀ հրահանգը շրջանցելուց խուսափելու համար այդ միջոցները պետք է տարածվեն նաև այն ընկերությունների վրա, որոնց նկատմամբ կիրառվում է 68/151/ԵՏՀ (5) հրահանգը և համեմատելի իրավական ձևեր ունեցող այն ընկերությունների վրա, որոնց նկատմամբ կիրառվում են երրորդ երկրների օրենքները,

քանի որ, երբ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության և երրորդ ներածական դրույթում նշված մեկ այլ ընկերության միջև հարաբերությունները միայն անուղղակի բնույթ են կրում,

արդարացված է թվում մեղմել այն դրույթները, որոնք կիրառվում են այն դեպքում, երբ հարաբերությունն ուղղակի բնույթ է կրում՝ նախատեսելով ձայնի իրավունքների իրականացման կասեցում՝ որպես նվազագույն միջոց՝ սույն Հրահանգի նպատակներին հասնելու համար,

քանի որ, երբ անդամ պետությունը նախատեսում է 77/91/ԵՏՀ հրահանգով սահմանված պատժամիջոցներին համարժեք պատժամիջոցների համակարգ և ձայնի իրավունքների իրականացման կասեցում, կարող է համարվել, որ նման օրենսդրությունն արդեն իսկ համապատասխանում է սույն Հրահանգի նպատակներին,

քանի որ, ավելին, արդարացված է այն դեպքերի նկատմամբ սահմանափակումները չկիրառելը, երբ մասնագիտական գործունեության առանձնահատկությունը բացառում է սույն Հրահանգի նպատակները վտանգելու հնարավորությունը,

քանի որ անդամ պետությունների ֆինանսական շուկայում տվյալ երկրի տնտեսական կառուցվածքի, ինչպես նաև ինքնակարգավորման կանոնների առումով չափազանց կտրուկ հետևանքներից բխող տատանումներից խուսափելու համար պետք է նախատեսվի անհրաժեշտ համապատասխանեցման ժամանակաշրջան,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

77/91/ԵՏՀ հրահանգի 24-րդ հոդվածից հետո ավելացնել նոր հոդված.

«Հոդված 24ա

1. ա) Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության բաժնետոմսերի բաժանորդագրումը, ձեռքբերումը կամ տնօրինումը՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 1-ին հոդվածի իմաստով մեկ այլ ընկերության կողմից, որտեղ ձայնի իրավունքների մեծամասնությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությանը կամ որի նկատմամբ այն ուղղակի կամ անուղղակի գերակա ազդեցության հնարավորություն ունի, սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության կողմից համարվում են կատարված.

բ) (ա) ենթապարբերությունը կիրառվում է նաև, եթե մյուս ընկերության նկատմամբ կիրառվում է երրորդ երկրի իրավունքը և այն 68/151/ԵՏՀ հրահանգի 1-ին հոդվածում թվարկված իրավական ձևերի հետ համեմատելի իրավական ձև ունի:

2. Այդուհանդերձ, եթե ձայնի իրավունքների մեծամասնությունը սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությանն անուղղակիորեն է պատկանում կամ այն անուղղակիորեն գերակա ազդեցության հնարավորություն ունի, անդամ պետությունները կարող են չկիրառել 1-ին պարբերությունը, եթե նրանք նախատեսում են մյուս ընկերությանը պատկանող՝ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության բաժնետոմսերից բխող ձայնի իրավունքների իրականացման կասեցում:

3. Ընկերությունների խմբերի մասին ազգային օրենսդրությունների համաձայնեցման բացակայության դեպքում անդամ պետությունները կարող են՝

ա) սահմանել այն դեպքերը, երբ համարվում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունը մեկ այլ ընկերության վրա գերակա ազդեցության հնարավորություն ունի. եթե անդամ պետությունը կիրառում է այս տարբերակը, նրա ազգային իրավունքով, ամեն դեպքում, պետք է նախատեսվի, որ գերակա ազդեցության հնարավորությունն առկա է, եթե սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունը.

– իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մյուս ընկերության վարչական, կառավարման կամ վերահսկիչ մարմնի անդամների մեծամասնությանը և, մինևույն ժամանակ, դրա բաժնետերը կամ մասնակիցն է կամ

– մյուս ընկերության բաժնետերը կամ մասնակիցն է և, այդ ընկերության մյուս բաժնետերերի կամ մասնակիցների հետ կնքված համաձայնագրի համաձայն, միանձնյա տնօրինում է դրա բաժնետերերի կամ մասնակիցների ձայնի իրավունքների մեծամասնությունը:

Անդամ պետությունները պարտավոր չեն նախատեսել առաջին և երկրորդ պարբերություններում նշված դեպքերից բացի այլ դեպքեր՝

բ) սահմանել այն դեպքերը, երբ համարվում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությանը անուղղակիորեն պատկանում են ձայնի իրավունքներ կամ, որ այն գերակա ազդեցության հնարավորություն ունի.

գ) որոշակիացնել այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում համարվում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունը ձայնի իրավունքներ ունի:

4. ա) Անդամ պետությունները կարող են չկիրառել 1-ին պարբերությունը, եթե բաժանորդագրումը, ձեռքբերումը կամ տնօրինումն իրականացվում է ի շահ բաժնետոմսերը բաժանորդագրող, ձեռք բերող կամ տնօրինող անձից բացի այլ անձի, որը ոչ 1-ին պարբերությունում նշված սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունն է, ոչ էլ մեկ այլ ընկերություն, որտեղ ձայնի իրավունքների մեծամասնությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությանը կամ որի նկատմամբ այն ուղղակի կամ անուղղակի գերակա ազդեցության հնարավորություն ունի:

բ) Անդամ պետությունները կարող են չկիրառել 1-ին պարբերությունը, եթե բաժնետոմսերի բաժանորդագրումը, ձեռքբերումը կամ տնօրինումն իրականացվում է մյուս ընկերության կողմից՝ արժեթղթերի մասնագիտացված դիլերի իր կարգավիճակում կամ այդ գործունեության շրջանակներում՝ պայմանով, որ այն անդամ պետությունում գտնվող կամ այնտեղ գործող արժեթղթերի բորսայի անդամ է, կամ հաստատվում կամ վերահսկվում է անդամ պետության՝ արժեթղթերի մասնագիտացված դիլերներին (որոնք, սույն Հրահանգի իմաստով, կարող են նաև վարկային կազմակերպություն լինել) վերահսկելու իրավասություն ունեցող մարմնի կողմից:

5. Անդամ պետությունները կարող են չկիրառել 1-ին պարբերությունը, եթե սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության՝ մեկ այլ ընկերության կողմից տնօրինվող բաժնետոմսերը ձեռք են բերվել մինչև այն պահը, երբ երկու ընկերության միջև հարաբերությունները համապատասխանել են 1-ին պարբերությամբ սահմանված չափորոշիչներին:

Այդուհանդերձ, այդ բաժնետոմսերից բխող ձայնի իրավունքների իրականացումը կասեցվում է, իսկ բաժնետոմսերը հաշվի են առնվում սահմանելիս, թե արդյոք 19(1)(բ) հոդվածով սահմանված պահանջը բավարարված է:

6. Անդամ պետությունները կարող են չկիրառել 20(2) կամ (3) հոդվածը կամ 21-րդ հոդվածը, եթե սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության բաժնետոմսերը ձեռք են բերվել մեկ այլ ընկերության կողմից՝ պայմանով, որ նրանք նախատեսեն.

ա) սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության՝ մյուս ընկերության կողմից տնօրինվող բաժնետոմսերից բխող ձայնի իրավունքների իրականացման կասեցում, և

բ) որ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության վարչական կամ կառավարման մարմնի անդամները պարտավոր են մյուս ընկերությունից հետ գնել 20(2) և (3) հոդվածում և 21-րդ հոդվածում նշված բաժնետոմսերն այն գնով, որով դրանք ձեռք է բերել այդ ընկերությունը. այս պատժամիջոցը չի կիրառվում, միայն եթե սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության վարչական կամ կառավարման մարմնի անդամներն ապացուցում են, որ այդ

ընկերությունը ոչ մի դեր չի ունեցել տվյալ բաժնետոմսերի բաժանորդագրման կամ դրանց ձեռքբերման մեջ:»:

Հոդված 2

1. Անդամ պետությունները կարող են չկիրառել 77/91/ԵՏՀ հրահանգի 24ա հոդվածն այն բաժնետոմսերի նկատմամբ, որոնք ձեռք են բերվել մինչև 3(2) հոդվածում նշված օրը:

Այդուհանդերձ, այդ բաժնետոմսերից բխող ձայնի իրավունքների իրականացումը կասեցվում է, իսկ բաժնետոմսերը հաշվի են առնվում սահմանելիս, թե արդյոք 19(1)(բ) հոդվածով սահմանված պահանջը բավարարված է:

2. Ֆինանսական շուկայի տատանումներից խուսափելու համար Բելգիայի Թագավորությունը կարող է հետաձգել նման ձայնի իրավունքների իրականացման կասեցումը մինչև 1998 թվականի հունվարի 1-ը՝ պայմանով, որ

– դրանք բխում են այն բաժնետոմսերից, որոնք ձեռք են բերվել մինչև սույն Հրահանգի ծանուցումը, և

– այն բոլոր ընկերությունների համար, որոնց՝ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության հետ հարաբերությունները բավարարում են 77/91/ԵՏՀ հրահանգի 24ա (1) հոդվածով սահմանված չափորոշիչները, դրանք չզերազանցեն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության բաժնետոմսերից բխող ձայնի իրավունքների 10 տոկոսը:

Հոդված 3

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերն ընդունում են մինչև 1994 թվականի հունվարի 1-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունների կողմից այդ ակտերն ուժի մեջ մտնելու օրը պետք է սահմանվի ոչ ուշ, քան 1995 թվականի հունվարի 1-ը:

3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

4. Երբ անդամ պետություններն ընդունեն այդ ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին նման հղում պետք է կցված լինի: Նման հղում կատարելու ձևը սահմանվում է անդամ պետությունների կողմից:

Հոդված 4

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: Կատարված է Բրյուսելում, 1992 թվականի նոյեմբերի 23-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Ն. ԼԱՄՈՆՏ

1) ՊՏ թիվ C 8, 12. 01. 1991 թ., էջ 5 և ՊՏ թիվ C 317, 07. 12. 1991 թ., էջ 13:

2) ՊՏ թիվ C 240, 16. 09. 1991 թ., էջ 103 և 1992 թվականի հոկտեմբերի 28-ի որոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում):

3) ՊՏ թիվ C 269, 14. 10. 1991թ., էջ 21:

4) ՊՏ թիվ L 26, 31. 01. 1977թ., էջ 1: «Իսպանիայի ու Պորտուգալիայի անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ: 5) ՊՏ թիվ L 65, 14.03. 1968թ., էջ 8:
